

## ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

*«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են...» (Ղուկ. 12:20):*

Ղուկաս Ավետարանչի 12-րդ գլխի 13-21 համարներում Հիսուս պատմում է մի ագահ մեծահարուստի մասին, որի շտեմարանները լիքն էին ցորենով: Այդ տարի նրա բախտից արտերը շատ բերք են տալիս ու նա փոխանակ եղածը բաժանելու աղքատներին, մտածում է իր ունեցած հինը քանդելու և նորը՝ ավելի մեծը կառուցելու մասին: Հարուստը ինքն իրենից գոհ ասում է. *«...Ո՛վ մարդ, շատ տարիների համար ամբարված բազում բարիքներ ունես, հանգիստ արա, կե՛ր, խմի՛ր և ուրա՛խ եղի՛ր»:* Աստված տեսնելով նրա ագահությունը, ասում է. *«Անմիտ, հենց այս գիշեր հոգիդ քեզնից պահանջելու են, իսկ ինչ որ պատրաստել էս, ո՛ւմն է լինելու: Նույնպես է նաև նա, ով իր անձի համար գանձ կհավաքի և Աստուծով չի հարստանա» (Ղուկ. 12:13-21):*

Այս առակով Հիսուս դատապարտում է անմիտ հարուստի անձնասիրությունը, որովհետև որևէ մեկը չի ստեղծվել ապրելու միայն իր և հարստությանը գերի դառնալու համար: Հարուստի պես չպետք է մոռանանք ամենակարևոր պատվիրանը. *«Միբե՛լ և խոնարհվե՛լ Գերագույն Աստծու առաջ, որպես-պի ո՞ժ ստացած կարողանանք օգնել մեր եղբայրներին»:*

Այս առակը ցույց է տալիս, թե ագահությունը ինչպես կարող է նվաստացնել մարդուն: Երբեմն մարդիկ կարծում են, թե երկրավոր կյանքի հարստությունները մեր անձնական աշխատանքի արդյունքն են միայն, մինչդեռ Աստված է, որ պարգևում է մեզ դրանք: Առաջին Թագավորաց գրքում ասվում է. *«Տերն է աղքատացնում ու հարստացնում, ստորացնում ու բարձրացնում» (Ա. Թագ. 2:7):*

Ագահությունը նյութական վախկոտություն է, որովհետև ագահ մարդը ամեն անգամ դրամ ծախսելուց մտածում է, թե այդ ձևով իր հարստությունը կցամաքի:

Դրամ հավաքողների գումարները շատ անգամ ուրիշներն են կերել, իսկ Ազգին ու Եկեղեցուն իրենց գանձերը նվիրողները՝ անմահացել են պատմության մեջ և ստացել հապարավորների օրհնությունը:

*«Արծաթ սիրողը չի կշտանա արծաթից, ոչ էլ հարստություն սիրողը՝ իր եկամուտներից, ուստի դա ևս ունայնություն է» (Ժող. 5:9):*

Աստծու համար դրամը ամեն ինչ չէ: Երբ փարիսեցիները մեր Տիրոջը մոտեցան և դրամի գործածության համար հարցեր տվեցին, Նա պատասխանեց. *«Տվեք կայսրինը կայսեր, իսկ Աստծունը Աստծուն»:*

Այսօր եկեղեցական և համայնքային կյանքում դրամը մեծ տեղ ունի: Երբեմն Եկեղեցին էլ դրամի կարիքը ունի իր ծախսերը հոգալու համար: Սա չի նշանակում, թե Եկեղեցին վաճառատեղի է: Կրոն, հավատք և աստվածային գործություն դրամով չեն կարող վաճառվել: Վա՛յ նրանց, որոնք փորձում են Եկեղեցին դրամական անսուրբ գործարքների վերածել: *«Գրված է՝ «Իմ տունը աղոթքի Տուն պիտի լինի»* ասաց Հիսուս և վաճառականներին ու դրամ փոխողներին դուրս վռնդեց տաճարից:

Մեր մեծ բանաստեղծ, հեքիաթասաց Հովհաննես Թումանյանը ազա-  
հուրյան մասին մի գեղեցիկ հեքիաթ ունի, որը կոչվում է «Ոսկու կարասը»:  
Ամեն հեքիաթ կյանքից վերցված ճշմարտություն է, սա՛ նույնպես:

*«Պատմությունը երկու աղքատ գյուղացիների մասին է, որոնցից մեկը եզներ  
չունենալու պատճառով իր հողը վարձով է տալիս հարեանին: Այս հողագործը վար ու ցանք  
անելիս արտում կարաս է գտնում, մեջը լիքը ոսկի ու վազելով մյուս գյուղացու մոտ նրան  
ասում է, թե այդ ոսկին նրա բաժինն է, քանի որ նրա հողում է գտնվել: Վիճում են իրար  
հետ, երկար են վիճում թե ո՞ւմ պիտի պատկանի ոսկին, շատ կռվելուց հետո որոշում են  
գնալ թագավորի մոտ, որպեսզի նա ուղղություն տա, թե ոսկին ո՞ւմն է: Թագավորը լսելով  
ոսկու մասին, ազահությունից աչքերը խոշոր բացում է ու հանդիմանում նրանց խիստ հրա-  
մայական տոնով. «Ոչ քունն է, ոչ դրանք, իմ հողում կարասով ոսկի է դուրս եկել, իմն է» ու  
իր մարդկանցով գնում է, որպեսզի այն վերցնի, բայց երբ բացում են կարասի բերանը,  
տեսնում են, որ նրա մեջը լիքը օձեր են: Գյուղացիները գնում են, ոսկի է դուրս գալիս,  
թագավորն է գնում մեջը լիքը օձեր են հայտնվում:*

*Թագավորը իր երկրի իմաստուններին հրամայում է բացատրել այս երևույթը:  
Նրանք ասում են.*

*«Աստված կարասով ոսկին աղքատ հողագործներին պարգև է դրկել իրենց արկվու-  
թյան ու արդար աշխատանքի համար: Երբ որ նրանք են գնում, իրենց արդար վարձին են  
գնում ու միշտ էլ ոսկի են գտնում, իսկ երբ որ դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հա-  
փշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում»:*

*Որպեսզի հողագործները նորից չվիճեն իրար հետ, թե ո՞ւմ է պատկանում ոսկին,  
նրանց երկու երեխաներին ամուսնացնում են իրար հետ ու յոթ օր, յոթ գիշեր հարսանիք  
անում և իրենց արդար ու արկիվ աշխատանքի դիմաց Աստծու կողմից պարգև ուղարկված  
ոսկին էլ տալիս են նրանց»:*

*Հեքիաթը վերջանում է այսպես. «Քարին էստեղ, չարը էն ազահ թագավորի մոտ»:*

Աստված Իր պարգևներն է տալիս, որ մենք բոլորս երջանիկ ապրենք:  
Մեզ տրված է խելք, իմաստություն, ինչպես նաև Ավետարանի ճշմարտու-  
թյունները, որ ճանաչենք երկրավոր բարիքները գործածելու լավագույն  
միջոցները, թշվառներին, հիվանդներին, ծերերին ու անօգնական մարդ-  
կանց օգնության հասնելու:

Եթե մեր բարիքները ճիշտ ձևով օգտագործենք, չենք մտածի, թե ո՞ւր  
պահենք դրանք, այլ լավագույն նպատակի համար գործածելով կվարձատր-  
վենք թե՛ Աստծու և թե՛ մարդկանց կողմից:

*Իգուր չի, որ մեր Հայրապետները ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ դրել են ոչ թե սովորական մեղ-  
քերի մեջ, այլ համարել են յոթը մահացու մեղքերից մեկը, հպարտության, նախանձի, բար-  
կության, ծուրության, շատակերության և ցանկասիրության հետ միասին:*

Մեր ունեցած նյութական հարստությունը եկեք օգտագործենք այն  
հավատավոր հոգիների համար, որոնք պետքը ունեն մեր սիրույն ու օգնու-  
թյան: Աշխատենք նյութական հարստության միջոցով ձեռք բերել ամենա-  
կարևորը՝ հոգևոր հարստությունը, որը մեզ կուղեկցի գտնելու Երկնքի Ար-  
քայություն ու դեպի անմահություն տանող գաղտնի ճանապարհը: Ամեն: